<< ՀՀ Արարատի մարզի Զանգակատան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

գ. Զանգակատուն
հեռ.093-35-74-35
zangakatun5@mail.ru
«_23_»_08_ 2024 _ թ.
Ելից N23

ՀՀ Արարատի մարզպետ
պարոն Ս. Թևոնյանին

Հարգարժան պարո՛ն մարզպետ,

Հայտնում եմ Ձեզ, որ 2024-2025 ուստարում ՀՀ Արարատի մարզի «Զանգակատան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել են «Քիմիայի» (9 դասաժամ), «Հայոց պատմություն» (19 դասաժամ), «Համաշխարհային պատմություն» (7 դասաժամ), «Հասարակագիտություն» (9 դասաժամ), «ՀԵՊ» (2 դասաժամ), «Կենսաբանություն» (12 դասաժամ),«Ռ.լեզու» (8 դասաժամ), «Աշխարհագրություն» (2 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղեր:

Առդիր՝ հայտարարության տեքստը:

Տնօրեն՝ Թ.Միքայելյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ << ՀՀ Արարատի մարզի Զանգակատան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Քիմիա>> (9 դասաժամ), <<Հայոց պատմություն>> (19 դասաժամ), <<Համաշխարհային պատմություն>> (7 դասաժամ), <<Հասարակագիտություն>> (9 դասաժամ), <<ՀԵՊ>> (2 դասաժամ) <<Կենսաբանություն >> (12 դասաժամ), <<Աշխարհագրություն>> (2 դասաժամ), <<Ռ.լեզու>> (8 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա- վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

դիմում (Ձև 1),

մեկ լուսանկար 3x4 չափի,

բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

անձը հաստատող փաստաթուղթ,

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

ինքնակենսագրություն (Ձև 5),

այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում)

<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ

<<Հանրակրթության մասին>> օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2024 թվականի օգոստոսի 23-ից սեպտեմբերի 05-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 10-ին ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Զանգակատան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 35-74-35 հեռախոսահամարով: